**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**Ե/1181-25** **0077, ք. Երևան, Մ. Մաշտոցի պողոտա 47**

21 Մայիսի, 2025թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Ազատյան,**

Հիմք ընդունելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը, գնումների ոլորտում մրցակցության ապահովման և խտրականության բացառման նպատակով, ՀՀ պետական վերահսկողական ծառայությունն (այսուհետ՝ Ծառայություն) իրականացնում է մշտադիտարկում, որի շրջանակներում Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա հիմնադրամի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 2025 թվականի մայիսի 14-ին տեղեկագրում (օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության *հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք)* հրապարակված «ՀԳՊԱ-ԷԱՃԱՊՁԲ-2025/11» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ արձանագրվել են գնումների մասին օրենսդրության պահանջների անհամապատասխանություններ:

Մասնավորապես, Հրավերի 29-րդ, 30-րդ, 45-րդ, 50-րդ, 52-րդ, 54-րդ և 57-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնման առարկաների հատկանիշների բնութագրերը պարունակում են «կամ համարժեք» բառերը:

Համաձայն «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 5-րդ մասի՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ

մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, **բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:** Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Միաժամանակ, Օրենքի կիրարկման կարգի՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների: **Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը**:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝ առաջարկում ենք քննարկել և Հրավերում, Օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, կատարել փոփոխություններ՝ ձեռնարկված քայլերի մասին տեղեկացնելով Ծառայությանը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ**
**ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ**
**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ** **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*Կատարող՝ Անի Ախոյան*
*Ստորաբաժանում՝ Գնումների գործընթացների վերահսկողության վարչություն*
*Հեռ.՝ 010 31 32 14*